



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԸ

18.06.2020թ.
ք. Երևան

Քաղաքացիական գործ
թիվ ԵԿԴ/0244/02/12

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի
ենթակայությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապարմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

31.03.2006թ. Սեդա Ասլանյանի և «Գապրնակչին» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Անշարժ գույքի առուվաճառքի» նախնական պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ «Գապրնակչին» ՍՊԸ-ն պարտավորվել է ՀՀ կառավարության 30.06.2004թ.-ի թիվ 909 որոշման համաձայն՝ ք. Երևան, Արամի փողոցին հարող տարածքում՝ իրեն հատկացված 3.850 (երեք հազար ութ հարյուր հիսուն) քմ հողատարածքում կառուցվող 16 հարկանի շենքի (այսուհետ՝ Շենք) հետևի մասից 60 (վաթսուն) քմ ընդհանուր մակերեսով բնակարան՝ Շենքի տասներկուերորդ հարկի ձախ մասից՝ պատուհանները նայող Եկմայան թիվ 1 փողոցին, և Շենքի ստորգետնյա մասում մեկ ավտոկայանատեղի՝ քսան քմ տարածքով (այսուհետ՝ Գույք), վաճառել Սեդա Ասլանյանին՝ տվյալ պայմանագրով նախատեսված պայմաններով: Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Գույքի վաճառքի ընդհանուր գինը կազմում է տասնութ միլիոն դրամ: Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ Սեդա Ասլանյանը՝ որպես Պայմանագիրը կնքելու հաստատակամության ապացույց և դրա կատարման ապահովման միջոց, նախավճարի կարգով «Գապրնակչին» ՍՊԸ-ին վճարել է Պայմանագրի ամբողջ գումարը (...):

02.05.2007թ. Սեդա Ասլանյանի և «Գապրնակչին» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Անշարժ գույքի առուվաճառքի» նախնական պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիր: Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրի 1.1 կետը շարադրվել է այլ խմբագրությամբ, մասնավորապես՝ փոփոխվել է բնակարանի ընդհանուր մակերեսի չափը՝ սահմանելով 93,6 /իննսուներեք ամբողջ վեց/ քմ ընդհանուր մակերես: Համաձայնագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1 կետը շարադրվել է այլ խմբագրությամբ, համաձայն որի՝ Գույքի վաճառքի ընդհանուր գինը կազմում է 26.900.000 /քսանվեց միլիոն ինը հարյուր հազար/ դրամ: Համաձայնագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրի 3.2 կետը լրացվել է՝ սահմանելով, որ Սեդա Ասլանյանն ավելացված 33,6 /երեսուներեք ամբողջ վեց/ քմ-ի դիմաց «Գապրնակչին» ՍՊԸ-ին է վճարում 8.900.000 /ութ միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը վճարվում է 2 փուլով՝

ա) 3.560.000 /երեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամը համաձայնագիրը ստորագրելու պահին, բ) 5.340.000 /հինգ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը մինչև 2007 թվականի դեկտեմբերի երեսունմեկը:

21.01.2012 թվականին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է մուտքագրվել Սեդա Ասլանյանի ներկայացուցիչ Գևորգ Դավթյանի կողմից ներկայացված հայցադիմումը, որով պահանջվել է վավեր ճանաչելով Սեդա Ասլանյանի և «Գապրնակչին» ՍՊԸ-ի միջև կնքված 02.05.2006թ. համաձայնագիրը՝ պարտավորեցնել «Գապրնակչին» ՍՊԸ-ին կատարելու 31.03.2006թ. նոտարական կարգով վավերացված պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով կնքելու հիմնական պայմանագիր ք. Երևան, Արամի փողոցի հարող տարածքում առկա 16 հարկանի շենքի հետևի մասի բնակարանի (Շենքի 12-րդ հարկից՝ պատուհանները նայող Եկմայան թիվ 1 փողոցին) և Շենքի ստորգետնյա մասում՝ 20 քմ տարածքում գտնվող մեկ ավտոկայանատեղիի վերաբերյալ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) 01.02.2012թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի «Գործի վարույթը կասեցնելու մասին» 23.05.2012թ. որոշմամբ թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվում է Երևան քաղաքի Արամի փողոցի 72-80 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից բնակարաններ վաճառելու պատրվակով «Գապրնակչին» և «Նարեկ-Դավիթ» ՍՊ ընկերությունների տնօրեն Գագիկ Պապոյանի կողմից բազմաթիվ անձանց առանձնապես խոշոր չափերի գույքը խարդախությամբ հափշտակելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը:

16.04.2019թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մելքումյանի վարույթում գտնվող թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը վերջինիս լիազորությունները դադարեցվելու հիմքով վերամակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Բունիաթյանին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) (այսուհետ՝ Դատարան) 19.04.2019թ. որոշմամբ թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Այնուհետև, Դատարանը 13.05.2020թ. որոշում է կայացրել թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 15.04.2020թ. ուժի մեջ մտած ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի եզրափակիչ մասի և անցումային դրույթների 72-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան: Տվյալ դեպքում համաձայն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի՝ թիվ ԵԿԴ/0130/04/14 քաղաքացիական գործով «Գապրնակչին» ՍՊԸ-ն Երևան քաղաքի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.11.2014թ. վճռով ճանաչվել է սնանկ, և վարույթը դեռևս շարունակվում է: Հետևաբար, Դատարանը գտել է, որ թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ սնանկության դատարանի քննությանը»:

19.05.2020թ. թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Գ. Նարինյանին:

02.06.2020թ. որոշմամբ Սնանկության դատարանը գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատարանն արձանագրում է, որ թեպետ թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործով պատասխանող «Գապրնակչին» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա է թիվ ԵԿԴ/0130/04/14 սնանկության գործը, այդուհանդերձ առկա չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետով օրենսդրի սահմանած նախապայմաններից և ոչ մեկը, մասնավորապես՝

1) թեպետ վիճարկվող համաձայնագրի և անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրի առարկա է հանդիսանում «ՀՀ, ք. Երևան, Արամի փողոցին հարող տարածքում առկա 16 հարկանի շենքի հետևի մասի բնակարանը /շենքի 12-րդ հարկից պատուհանները նայող Եկմայան թիվ 1 փողոցին/ և ստորգետնյա մասում 20 քմ տարածքում գտնվող ավտոկայանատեղին», սակայն նշված գույքերը ներառված չեն պարտապանի գույքի կազմում /կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողի որոշմամբ ՀՀ, քաղաք Երևան, Արամի 72 հասցեին հարող տարածքում «Գապրնակչին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կառուցված շենքերը պետական գրանցում են ստացել Երևան համայնքի անվամբ, այնուհետև օտարվել են «ԴԻ ԸՆԴ ԷՅՋ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ՀՀ կադաստրի կոմիտեի տեղեկանքով՝ «Գապրնակչին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում արված չէ/,

2) թեպետ վիճարկվող համաձայնագրի և անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրի առարկա է հանդիսանում «ՀՀ, ք. Երևան, Արամի փողոցին հարող տարածքում առկա 16 հարկանի շենքի հետևի մասի բնակարանը /շենքի տասներկուերորդ հարկից պատուհանները նայող Եկմայան թիվ 1 փողոցին/ և ստորգետնյա մասում 20 քմ տարածքում գտնվող ավտոկայանատեղին», սակայն նշված գույքերը չեն հանդիսանում երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկա /նման ապացույց առկա չէ ո՛չ քաղաքացիական և ո՛չ սնանկության գործում/,

3) պահանջի հիմքում դրված է 02.05.2007 թվականի համաձայնագիրը և 31.03.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը, որոնց կողմերն են՝ գնորդ Սեդա Ասլանյանը և վաճառող «Գապրնակչին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, սակայն սնանկության գործով Սեդա Ասլանյանը պահանջատեր կամ պարտապան չի հանդիսանում, իսկ «Գապրնակչին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտապան է, այսինքն՝ գործարքը չի կնքվել պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ:

Նման պայմաններում դատարանը փաստում է, որ չի կարող այլ որոշման հանգեցնել քան արձանագրել իր անհամաձայնությունը ստացված քաղաքացիական գործը «Գապրնակչին» ՍՊԸ-ի սնանկության գործի շրջանակներում քննելու մասով, և օգտվելով

առկա իրավական հնարավորություններից, գտնում է, որ թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը պետք է ուղարկել ՀՀ վճարել դատարանի նախագահին՝ գործի ենթակայությունը որոշելու համար»:

Թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը Վճարել դատարանում ստացվել է 11.06.2020թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պարզառարանությունները և եզրահանգումը.

Սույն գործով առաջին աստիճանի դատարանների միջև քաղաքացիական գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու համար գտնում եմ, որ անհրաժեշտ է անդրադառնալ և եզրահանգումներ անել հետևյալ իրավական հարցադրումների կապակցությամբ.

1) արդյո՞ք 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննվող քաղաքացիական գործերը կարող են ըստ ենթակայության հանձնվել Սնանկության դատարանին,

2) արդյո՞ք Սնանկության դատարանը մինչև Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելից իրավասու է հանձնված գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնության հիմքով գործն ուղարկել Վճարել դատարանի նախագահին այն դեպքում, երբ փվյալ գործը հարուցվել է և քննվում է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում,

3) ինչպես մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով, այնպես էլ՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված են արդյո՞ք այնպիսի հանգամանքներ, որոնց բացակայությունը՝ գործի քննությամբ պարզելուց հետո միայն առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները կարող են վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին հարց քննարկել,

4) կարող են արդյո՞ք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) կարգավորումները կիրառվել մինչ այդ օրենքի ուժի մեջ մտնելը Սնանկության դատարանի վարույթում գտնվող սնանկության գործի հետագա վարման կամ առանձին դատավարական գործողությունների կատարման գործընթացում,

5) որո՞նք էին մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնց վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող էր միայն թույլ տալ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում,

6) որո՞նք են 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնց վերաբերյալ

քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում:

Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ.

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Նախկին օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում (այսուհետ՝ դատարաններ) քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին:

Նախկին օրենսգրքի՝ «Առարկայական ընդդատությունն ընդհանուր իրավասության դատարանին» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախկին օրենսգրքի՝ «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ 12-րդ գլխի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը՝ ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1) եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ.

2) (...)

3) գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Ընդ որում, այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Նախկին օրենսգրքին: Միակ բացառությունն այս կանոնից նախատեսված է սնանկության վարույթը կարգավորող օրենքների համար:

Նախկին օրենսգիրքը, կարգավորելով քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը, քաղաքացիաիրավական բնույթի բոլոր վեճերի ընդդատությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Ընդ որում, Նախկին օրենսգիրքը, գործածելով «առարկայական ընդդատություն» և «տարածքային ընդդատություն» եզրույթները, սահմանափակվել է առարկայական ընդդատության վերաբերյալ միայն նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի կարգավորմամբ: Նշվածով հանդերձ՝ Նախկին օրենսգրքում առանձին գլխով առավել

հանգամանալից կարգավորված են տարածքային ընդդատության կանոնները: Մասնավորապես, օրենսդիրը ոչ միայն սահմանել էր այդ կանոններից յուրաքանչյուրին առաջադրվող պայմանները, այլև նախատեսել էր որոշակի հետևանքներ այդ կանոնների խախտմամբ հայցադիմումը վարույթ ընդունելու պարագայում՝ նման իրավիճակում Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով իմպերատիվ կերպով պարտավորեցնելով դատարանին գործը հանձնել այլ դատարանի քննությանը, եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ: Միաժամանակ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում օրենսդիրը սահմանել էր, որ **դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում** առանց բացահայտելու նման դեպքերի հնարավոր շրջանակը կամ սահմանելու այդպիսի լիազորության կիրառման համար անհրաժեշտ՝ ուղղորդող պայման (պայմաններ), ինչպես դա առկա է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում:

Վերոգրյալն ուղղակիորեն փաստում է նշված իրավակարգավորման անորոշությունը և իրավակիրառման գործընթացում խնդրահարույց բնույթը: Նշված նկատառումով, ելնելով քննարկվող իրավակարգավորման մեջ պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից՝ հարկ է նշել, որ օրենսդիրն այս դեպքում, որպես միակ ուղղորդող չափանիշ, սահմանել է **գործը հարուցված դատարանում քննելու անհնարինությունը**: Այս կապակցությամբ կարևորվում է հետևյալ հարցադրման պարզաբանումը. արդյո՞ք այդ անհնարինությունը բացառապես պետք է պայմանավորված լինի տարածքային ընդդատության որևէ կանոնի կիրառելիությամբ, թե նման անհնարինություն կարող է ծագել նաև առարկայական ընդդատության կանոնի կիրառման կամ դրա փոփոխության արդյունքում:

Համակարգային մեկնաբանության ենթարկելով Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իրավադրույթները՝ պետք է նշել, որ օրենսդիրը հստակ կարգավորել է տարածքային ընդդատության կանոնի խախտմամբ վարույթ ընդունված և գործի քննության ընթացքում տարածքային ընդդատության փոփոխության դեպքերը՝ առաջին դեպքում նախատեսելով գործը հանձնելու դատարանի իմպերատիվ լիազորություն, իսկ երկրորդ դեպքում պարտավորեցնելով շարունակել գործի քննությունն այն հարուցված դատարանում: Հետևաբար կարելի է փաստել, որ Նախկին օրենսգրքը սպառիչ կերպով կարգավորել է տարածքային ընդդատության կանոններով պայմանավորված գործերի հանձնման կամ հետագա քննության հարցը և նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված իրավիճակը որևէ կերպ չի կարող ենթադրել տարածքային ընդդատության կանոնի խախտման կամ փոփոխության հիմքով գործը հանձնելու իրավական հնարավորությունը: Ինչպես արդեն իսկ նշվեց, թեև օրենսդիրը չի բացահայտել Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հնարավոր իրավիճակները, սակայն դատական պրակտիկայում այդպիսին կարող են դիտարկվել այն դեպքերը, երբ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինությունը պայմանավորված է տվյալ դատարանի՝ գործը քննելու իրավասություն ունեցող բոլոր դատավորների կողմից ինքնաբացարկ հայտնելու փաստով կամ վերադաս դատարանի կողմից դատական ակտի բեկանման դեպքում տվյալ դատարանի բոլոր դատավորների՝ գործի քննությանը մասնակցություն ունենալու հանգամանքով: Ընդ որում, վկայակոչված երկու դեպքում էլ օբյեկտիվորեն առկա է գործը տվյալ դատարանում քննելու անհնարինություն, այդ անհնարինությունը որևէ կերպ պայմանավորված չէ

ընդդատության կանոնի խախտմամբ կամ փոփոխությամբ: Ընդհակառակը, նման անհնարինությամբ պայմանավորված՝ գործն այլ դատարան ուղարկելու արդյունքում տեղի է ունենում տարածքային ընդդատության այնպիսի փոփոխություն, որը փաստորեն չի համապատասխանում տվյալ գործի տարածքային ընդդատության վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանած ընդհանուր կամ հատուկ կանոնին: Վերոգրյալից հետևում է, որ Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի վկայակոչմամբ գործն այլ դատարան ուղարկելու հիմքը որևէ աղերս չէր կարող (չի կարող) ունենալ տարածքային ընդդատության կանոնների հետ՝ անկախ այն հանգամանքից, որ օրենսդրական շարադրանքի պայմաններում տեղ է գտել Նախկին օրենսգրքի «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ գլխում: Նման պայմաններում քննարկելով այն հարցը, թե արդյոք այն կարող է վերաբերել առարկայական ընդդատության կանոնին՝ պետք է արձանագրել հետևյալը.

Նախկին օրենսգիրքը նախատեսում էր, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության կարգը սահմանվում է նաև այլ օրենքներով: Որպես այլ՝ այդպիսի օրենք՝ կիրառման ենթակա է (էր) «Սնանկության մասին» օրենքը, ընդ որում՝ նշված օրենքում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը կարող էին չհամապատասխանել Նախկին օրենսգրքի դրույթներին:

«Սնանկության մասին» օրենքում 17.06.2016թ. ընդունված և 23.07.2016թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում «Սնանկության գործերի առարկայական ընդդատությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»: Ընդ որում, նշված փոփոխությունը և լրացումը նախատեսող օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում, որպես այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկ, նշված է. «Գործնականում հաճախ է հանդիպում, երբ պարտապանին վերաբերող վեճերը քննվում են տարբեր դատարաններում, օրինակ, երբ պարտապանը վիճարկում է գործարքների անվավերությունը, գույքային պահանջներ է ներկայացնում և այլն: Նման դեպքերում սնանկության գործը մնում է առկախված: Պարտապանին վերաբերող բոլոր քաղաքացիական գործերը մեկ վարույթում քննելը կարող է այն ավելի արդյունավետ դարձնել»¹: Շարադրվածից հետևում է, որ օրենսդրական այս փոփոխության նախաձեռնման և իրականացման նպատակը պարտապանին վերաբերող քաղաքացիական գործերը մեկ վարույթում կենտրոնացնելն է, որը պետք է ապահովի արդարադատության արդյունավետությունը: Փաստորեն, քննարկվող կարգավորմամբ սահմանվել է առարկայական ընդդատության՝ Նախկին օրենսգրքի կարգավորումը լրացնող նոր կարգավորում, որը նախատեսում է, որ որոշակի քաղաքացիական գործեր ենթակա են քննության սնանկության գործի շրջանակում: Ընդ որում, եթե նոր հարուցվելիք գործերի պարագայում արդեն իսկ կանխորոշված էր դրանց առարկայական ընդդատությունը, ապա արդեն իսկ հարուցված գործերի պարագայում նոր կանոնի կիրառելիությունը պարզաբանման անհրաժեշտություն ունի: Մասնավորապես, վերջին դեպքում ստացվում է, որ դատարանի վարույթում առկա է Նախկին օրենսգրքի 15-րդ

¹ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8199&Reading=0>

հողվածի 1-ին մասին համապատասխանող քաղաքացիական գործ, որը միաժամանակ համապատասխանում է «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-105-Ն օրենքով սահմանված՝ առարկայական ընդդատության չափանիշներին: Այլ կերպ ասած՝ առաջանում է տվյալ գործը սնանկության վարույթից դուրս քննելու օբյեկտիվ անհնարինություն, որն էլ կարող է որակվել որպես Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ **«գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպք»:** Հետևաբար կարելի է արձանագրել, որ Նախկին օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննվող այն քաղաքացիական գործերը, որոնք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-105-Ն օրենքի ուժով ենթակա են քննության սնանկության վարույթում, Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիմքով կարող են հանձվել սնանկության գործը քննող դատարանին, տվյալ պարագայում՝ Սնանկության դատարանին:

Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ.

09.02.2018թ. ընդունված և 09.04.2018թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Գործող օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգիրքը սահմանում է **Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան),** Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) քաղաքացիական գործերով դատավարության իրականացման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են **Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան)** սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գործող օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի՝ մինչև 21.11.2019թ. խմբագրությամբ գործող 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև **վարչական դատարանի կողմից** վերահասցեագրված գործի նկատմամբ:

Նույն հոդվածի՝ 21.11.2019թ. խմբագրությամբ գործող 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև **վարչական կամ սնանկության**

դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ **առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը առաջին ատյանի դատարանում** քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով:

Ի տարբերություն Նախկին օրենսգրքի՝ 09.02.2018 թվականին ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության համակարգ ներդրվեց նաև նոր գործիքակազմ, այն է՝ գործի հարուցման կամ քննության փուլերում տվյալ գործի ընդդատության կամ ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու իրավական ընթացակարգ՝ նման լիազորություն վերապահելով Վճռաբեկ դատարանի նախագահին: Ընդ որում, եթե մինչև 21.11.2019թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հնարավորություն չէր տալիս լուծելու քաղաքացիական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանների և Սնանկության դատարանի միջև ծագած՝ գործի ենթակայության վերաբերյալ վեճը, ապա 21.11.2019թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը Վճռաբեկ դատարանի նախագահին օժտել է նաև նշված ենթակայության վեճը լուծելու իրավասությամբ՝ համապատասխանաբար գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնություն ունենալու դեպքում նման հարցով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու լիազորություն վերապահելով նաև գործը ստացած Սնանկության դատարանին:

Նկատի ունենալով, որ Սնանկության դատարանի՝ գործի ենթակայության շուրջ ծագած վեճով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու և նման վեճը լուծելու Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորության առկայության հարցը կարող է որոշակիորեն խնդրահարույց համարվել Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում հարուցված և քննվող գործերի պարագայում՝ Նախկին օրենսգրքում համապատասխան լիազորությունների և ընթացակարգերի բացակայության հիմքով, հարկ է անդրադառնալ և պարզաբանել հետևյալ հարցադրումը.

*արդյո՞ք այն դեպքում, երբ Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում հարուցված և Նախկին օրենսգրքի կանոններով քննվող գործը հանձնվել է Սնանկության դատարանին, և Սնանկության դատարանն անհամաձայնություն ունի գործի ենթակայության վերաբերյալ, Սնանկության դատարանը պե՞տք է ղեկավարվի Նախկին օրենսգրքով, որը ենթակայության վեճի լուծման ընթացակարգ և ըստ այդմ՝ համապատասխան լիազորություններ չի նախատեսում, թե նոր՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի կանոնով, որը սահմանում է, որ գործն ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի **ենթակայությանը**:*

Ընդ որում, նշված խնդիրը հարկ է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 21.11.2019թ. ուժի մեջ մտած լրացման համատեքստում՝ համակարգային վերլուծության ենթարկելով Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը:

Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ Նախկին օրենսգրքի դրույթները կիրառելի են միայն 09.02.2018թ.

ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ **առաջին ատյանի դատարանի** վարույթում գտնվող և **առաջին ատյանի դատարանում** քննվող գործերի նկատմամբ, որպիսին Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը դիտարկում է միայն **Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին**: Նույն հոդվածի 2-րդ մասում տարբերակված կերպով գործածելով «Սնանկության դատարան» եզրույթը՝ օրենսդիրը որևէ կերպ այն չի ներառել նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման մեջ, ինչից հետևում է, որ Նախկին օրենսգրքով գործի քննությունն իրականացնելու պայմանը հասցեագրված է **միայն Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին**: Ավելին, Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը գործածում է նաև «վարույթում գտնվող» արտահայտությունը, որպիսի իրավիճակը բացառվում է այն դեպքում, երբ Սնանկության դատարանին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից գործ է փոխանցվում: Նման իրավիճակում գործը դեռևս չի գտնվում Սնանկության դատարանի վարույթում, հետևաբար Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այդպիսի իրավիճակում կիրառելի չէ: Միաժամանակ նկատի ունենալով Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որը նախատեսում է, որ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են **Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան)** սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, Սնանկության դատարանը փոխանցված քաղաքացիական գործի ընդունելության հարցը լուծելիս, հիմք ընդունելով Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իրավանդումը, իրավասու է ծագած ենթակայության վեճը լուծելու համար գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին: Վճռաբեկ դատարանի նախագահն էլ վերը շարադրված պատճառաբանությունների հիմքով իրավասու է Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի կիրառմամբ լուծելու իրեն հասցեագրված ենթակայության վեճը:

Դիրքորոշումներ 3-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից **գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով** քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով»:

Նույն կարգավորումն առկա է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն՝ «(...) դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝

(...),

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար,

(...)»:

Նույն կարգավորումն առկա է նաև մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

(...),

օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

09.04.2018թ. ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգիրքը:

Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերը:

Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերն առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով»:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանից ծանուցում ստանալու կամ Օրենսգրքով թույլատրելի ցանկացած այլ աղբյուրից տեղեկատվություն ստանալու դեպքում առաջին հերթին իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերով պետք է քննարկման առարկա դարձնեն գործի վարույթը՝ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարճելու հիմքի առկայության հարցը: Միաժամանակ հարկ է նշել, որ սովյալ հիմքի առկայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճելու իրավական հնարավորություններն առկա են ինչպես 09.04.2018թ. ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետում, այնպես էլ՝ Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում:

«Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող այն քաղաքացիական գործի վարույթն է ենթակա կարճման, որով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է **գումարի բռնագանձման պահանջ կամ գույք հանձնելու պահանջ**: Հետևաբար «Սնանկության մասին» օրենքի

վկայակոչված հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու անհրաժեշտություն կարող է ծագել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պարասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պարասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գումարի բռնագանձման պահանջի դեպքում առավել քան հստակ է դատական գործերի շրջանակը, իսկ գույք հանձնելու պահանջի մասով իրավակիրառ պրակտիկայում հնարավոր է առաջանան որոշակի տարրնկալումներ, ինչպես նաև նկատի ունենալով դատական գործերը մեկ դատարանից մեկ այլ դատարան անհարկի հանձնելը, գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, և այդ հանգամանքների հնարավոր ազդեցությունը գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման գործընթացի վրա՝ գտնում եմ, որ հարկ է վերլուծել «Սնանկության մասին» օրենքի վերը նշված հոդվածի իմաստով «գույք հանձնել» եզրույթի հասկացությունը:

Պարտապանի գույքի կազմում ներառման ենթակա գույքի շրջանակը հստակ սահմանված է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ կարգավորումը որոշակի փոփոխությունների է ենթարկվել 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքով: Մասնավորապես՝ մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները: Ապահովված իրավունքի այն առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող), որի վերաբերյալ դատարանը սույն օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով ընդունել է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում, չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում ընդգրկվում են սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

Հետևաբար, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թեպետ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում ընդլայնվել է պարտապանի գույքի կազմում ներառման ենթակա

գույքի կազմի շրջանակը, այդ թվում՝ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաների ներառման ենթակա լինելու առումով, այդուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ ինչպես մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի, այնպես էլ՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը վերաբերում է պատասխանողին պատկանող գույքին:

Այս մեկնաբանությունն առավել ամրապնդվում է «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով (ներկայումս գործող խմբագրությամբ) սահմանված այն լրացուցիչ պահանջով, որ հարուցված քաղաքացիական գործն իր ազդեցությունը պետք է ունենա սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ վերը նշված իրավակարգավորումների բովանդակային վերլուծությունից հետևում է, որ «գույք հանձնել» եզրույթը վերաբերում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության մեջ բացահայտված գույքին, այլ ոչ թե պարտապանի մոտ գտնվող ցանկացած գույքին:

Դիրքորոշումներ 4-րդ հարցադրման վերաբերյալ.

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով»:

«Սնանկության մասին» օրենքի՝ սնանկության գործերի քննության կարգը սահմանող 1-ին հոդվածի համաձայն՝

«1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգրքի գործողության ոլորտը սահմանող 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով»:

Վերոգրյալ իրավակարգավորումները վերլուծելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո՝ կարելի է հստակորեն արձանագրել, որ Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքով մեծածավալ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում, և Օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող հոդվածով տրվել են այն անհրաժեշտ իրավական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել մինչև Օրենքի ընդունումը հարուցված և Օրենքի ընդունումից հետո հարուցված սնանկության վարույթների նկատմամբ հետագա կիրառելի իրավակարգավորումների շրջանակը: Այսինքն՝ հստակ ընդգծվել է այն սահմանագիծը, թե սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է գործում 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով), և սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է շարունակում գործել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով):

Վերոգրյալ իրավական վերլուծության արդյունքում հստակ է այն, որ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում կիրառելի չէ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի իրավակարգավորումները: Հետևաբար, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քաղաքացիական գործերը 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Սնանկության դատարան ըստ ենթակայության ուղարկելիս, ի թիվս այլ հանգամանքների, պետք է պարզեն Սնանկության դատարանում վարվող սնանկության գործը հարուցվել է մինչև 15.04.2020 թվականը (օրենքի ուժի մեջ մտնելը), թե հարուցվել է 15.04.2020 թվականից հետո: Սա է այն սահմանագիծը, որ առաջին ատյանի դատարանները պետք է նկատի ունենան կիրառելի իրավունքի նորմերն ընտրելու գործընթացում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ի թիվս 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի մյուս կարգավորումների, նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 10-րդ մասը կիրառելիս պետք է այն դիտարկել համակարգային, այն է՝ նույն հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո և շրջանակներում:

Մինչև 15.04.2020 թվականը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումները կիրառելը, այդ թվում՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իմաստով, ուղղակի կհակասի նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը:

Դիրքորոշումներ 5-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ

պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը **մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով** սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) պետք է բացառված լինի քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

2) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

3) սնանկության գործով պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ կարելի է փաստել, որ միայն վերը նշված երեք պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Դիրքորոշումներ 6-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը սահմանելիս Օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Օրենսդրի այս կամքն իր ցայտուն արտահայտումն է ստացել տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններում, որպիսի իրավիճակում ուշադրության է արժանի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.):

Այսպես. 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի):

Այդուհանդերձ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդիրը սահմանել է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում Սնանկության դատարանի կողմից քննության ենթակա (այդ թվում՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից ըստ ենթակայության ստացված) գործերի շրջանակը որոշելու համար անհրաժեշտ իրավակարգավորումները, որոնց վերաբերյալ իրավական վերլուծությունները մանրամասնորեն շարադրված են «Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ» հատվածում: Այսինքն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված քաղաքացիական գործերի փաստական հանգամանքների՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմանը համապատասխանելն ինքնին բավարար չէ քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին եզրահանգում կատարելու համար:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը **15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով** սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) պետք է բացառված լինի քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

2) սնանկության գործը պետք է հարուցված լինի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքն ուժի մեջ մտնելու հետո,

3) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

4) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անհրաժեշտ է փաստել, որ միայն վերը նշված չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դատարանի 19.04.2019թ. որոշմամբ վարույթ է ընդունվել թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը, որի շրջանակներում քննվում է Սեդա Ասլանյանի հայցն ընդդեմ «Գապրնակչին» ՍՊԸ-ի, և որով պահանջվել է վավեր ճանաչելով Սեդա Ասլանյանի և «Գապրնակչին» ՍՊԸ-ի միջև 02.05.2006թ. կնքված համաձայնագիրը՝ պարտավորեցնել «Գապրնակչին» ՍՊԸ-ին կատարելու 31.03.2006թ. նոտարական կարգով վավերացված պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով կնքելու հիմնական պայմանագիր ք. Երևան, Արամի փողոցի հարող տարածքում առկա 16 հարկանի շենքի հետևի մասի բնակարանի (Շենքի 12-րդ հարկից՝ պատուհանները նայող Եկմայան թիվ 1 փողոցին) և Շենքի ստորգետնյա մասում՝ 20 քմ տարածքում գտնվող մեկ ավտոկայանատեղիի վերաբերյալ:

13.05.2020թ. Դատարանը որոշում է կայացրել գործն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելու մասին: Քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու Դատարանի եզրահանգումը հիմնավորվել է Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասի վկայակոչմամբ և կիրառմամբ, որը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան»: Մասնավորապես, Դատարանը, արձանագրելով, որ համաձայն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի՝ թիվ ԵԿԴ/0130/04/14 քաղաքացիական գործով «Գապրնակչին» ՍՊԸ-ն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.11.2014թ. վճռով ճանաչվել է սնանկ, և վարույթը դեռևս շարունակվում է, եզրահանգել է, որ սույն

քաղաքացիական գործով առկա են 15.04.2020 թվականին խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հիմքերը, ուստիև սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ սնանկության դատարանի քննությանը:

Սնանկության դատարանը նույնպես թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի ենթակայության հարցը քննարկել և իր անհամաձայնությունը հիմնավորել է Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի իրավակարգավորումների լույսի ներքո՝ միաժամանակ արձանագրելով, որ թեև «Գապրնակչին» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել, այդուհանդերձ առկա չեն 15.04.2020թ. խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմանները:

Հարկ է նախ և առաջ արձանագրել, որ համաձայն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ թիվ ԵԿԴ/0130/04/14 քաղաքացիական գործով «Գապրնակչին» ՍՊԸ-ն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.11.2014թ. վճռով ճանաչվել է սնանկ:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ թիվ ԵԿԴ/0244/02/12 գործը հարուցվել է և նշված գործի քննությունը Դատարանում շարունակվել է Նախկին օրենսգրքով սահմանված կարգով, հետևաբար սույն որոշման «**Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ**» կետում արտահայտված իրավական վերլուծությունների հիմքով առկա էր նշված գործը սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ նախատեսված պայմանների առկայության պարագայում Սնանկության դատարան փոխանցելու իրավական հնարավորություն: Վերոգրյալով հանդերձ՝ նկատի ունենալով, որ թիվ ԵԿԴ/0244/02/12 գործը ստացած Սնանկության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել գործի ենթակայության վերաբերյալ և այն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին, հարկ է նաև արձանագրել, որ սույն որոշման «**Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ**» կետում արտահայտված իրավական վերլուծությունների հիմքով առկա է նաև Սնանկության դատարանի՝ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու և գործի ենթակայության վերաբերյալ վեճը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից լուծելու իրավական հնարավորությունը:

Նման պայմաններում սույն որոշման **3-6 կետերում** արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներին՝ գտնում եմ, որ դատարանների միջև ծագած ենթակայության վեճը լուծելու համար հարկ է պարզել հետևյալ հանգամանքները՝

ա) արդյո՞ք բացառված է թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

բ) թիվ ԵԿԴ/0244/02/12 գործի ենթակայության հարցը լուծելիս կիրառման ենթակա է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, թե 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումը,

գ) կիրառելի իրավակարգավորման շրջանակներում առկա են արդյո՞ք թիվ ԵԿԴ/0244/02/12 գործը Սնանկության դատարանին հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանները:

Թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջների ուսումնասիրությունից հետևում է, որ թեև սնանկ ճանաչված «Գապրնակշին» ՍՊԸ-ն հանդես է գալիս որպես պատասխանող, սակայն վերջինիցս գումարի բռնագանձման կամ նրան պատկանող գույք հանձնելու պահանջ ներկայացված չէ: Մասնավորապես, թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործով քննության են առնվում նախնական պայմանագիրը վավեր ճանաչելու և հիմնական պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջներ, մինչդեռ ինչպես հետևում է «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարգավորումից, նշված իրավանորմի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու պարտադիր պայման է այն, որ սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ուղղակիորեն ներկայացված լինի գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ: Հետևաբար բացառվում է «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի վարույթը կարճելու իրավական հնարավորությունը:

Անդրադառնալով սույն գործի ենթակայության հարցը լուծելիս կիրառման ենթակա օրենսդրության հարցին՝ հարկ է նշել, որ «Գապրնակշին» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **06.11.2014թ.** վճռով, այսինքն՝ մինչև 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (15.04.2020թ.), որպիսի պարագայում սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում կիրառման ենթակա են մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները: Հետևաբար թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի՝ Սնանկության դատարանին ենթակայության հարցը պետք է պարզել և գնահատել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների լույսի ներքո: Մինչդեռ թե՛ Դատարանը, և թե՛ Սնանկության դատարանը թիվ ԵԿԴ/0244/02/12 գործի ենթակայության վերաբերյալ իրենց հիմնավորումները և անհամաձայնությունը շարադրելիս սխալ եզրահանգման են եկել կիրառման ենթակա օրենսդրության վերաբերյալ՝ թիվ ԵԿԴ/0244/02/12 գործի ենթակայության հարցը քննարկելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման լույսի ներքո այն դեպքում, երբ սույն որոշման իրավական և փաստական հանգամանքների վերլուծություններից հետևում է, որ կիրառման ենթակա է մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը:

Անդրադառնալով թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործով հայցադիմումով ներկայացված պահանջների բնույթին՝ հարկ է արձանագրել, որ թեև սնանկ ճանաչված «Գապրնակշին» ՍՊԸ-ն հանդես է գալիս որպես պատասխանող և թեև սույն գործով ներկայացված հայցապահանջներն անուղղակիորեն կարող են առնչվել վերջինիս գույքային իրավունքներին (մասնավորապես՝ գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի արդյունքում հնարավոր է տեղի ունենա սնանկ ճանաչված պարտապանի գույքային իրավունքների փոփոխություն՝ հնարավոր գույքային միավորների արտահոսքի

կամ ներհուքի եղանակով), սակայն նշված իրավունքները սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված լինելու կապակցությամբ գործում առկա չէ որևէ ապացույց կամ ներկայացված չէ որևէ հիմնավորում:

Հետևաբար, վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը Սնանկության դատարանին ըստ ենթակայության հանձնելու համար գործում բացակայում են անհրաժեշտ փաստական և իրավական ամբողջական հիմքերը, ուստի թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:
2. Սույն որոշումը և թիվ ԵԿԴ/0244/02/12 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:
3. Որոշման օրինակն ուղարկել Սնանկության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ